Ցանկացած անձ իրավունք ունի «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ից ստանալ հետևյալ տեղեկատվությունը՝

Ըստ «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 14[1]–ի՝

- Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների (առնվազն վերջին տարեկան) և դրանց վերաբերյալ արտաքին աուդիտի եզրակացության պատճենները,
- Կազմակերպության պետական գրանցման վկայականի և կանոնադրության պատճենները,
- Թարմացված գրքույկ՝ վարկային կազմակերպության կողմից վարկերի տրամադրման և հաճախորդների համար իրականացվող ֆինանսական գործառնությունների վերաբերյալ, այդ թվում՝ տոկոսադրույքներ, ծառայության վճարներ, ժամկետայնություն և այլ էական պայմաններ:

Ըստ «Հաճախորդների բողոքների քննության գործընթացը կարգավորող ներքին իրավական ակտերին ներկայացվող նվազագույն պայմաններ և սկզբունքներ» կանոնակարգ 8/04–ի 8-րդ կետի՝

- Բողոքների ընդունման և քննության վերաբերյալ ներքին կանոնները:

Ըստ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի հոդված 16-ի 3-րդ մասի և հոդված 126-ի 3-րդ մասի՝

- Ազդագրի տպագիր տարբերակը:
- Անկախ աուդիտորական եզրակացությամբ հաստատված տարեկան և միջանկյալ հաշվետվություններ:

Նշված փաստաթղթերը տրամադրվում են գրավոր դիմումի հիման վրա՝ **անվճար**, էլեկտրոնային եղանակով (էլ. փոստով) կամ առձեռն՝ «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ գլխամասային գրասենյակից և հնգօրյա ժամկետում, իսկ ազդագրի տպագիր տարբերակի դեպքում՝ պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը: